01.06.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Իմ փոքրիկ բարեկամներ, սիրելի երեխաներ

Շնորհավորում եմ ձեզ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ: Ամռան առաջին օրը նշելով այս կարևոր ու պարտավորեցնող տոնը՝ միաժամանակ վերահաստատում ենք մեր հանձնառությունը յուրաքանչյուր երեխայի շահերի և իրավունքների պաշտպանության գործում:

Պաշտպանելով երեխաների իրավունքները՝ մենք միաժամանակ պաշտպանում ու երաշխավորում ենք մեր լիարժեք ու ներդաշնակ ապագան:

Երեխաների նկատմամբ հոգածությունն սկսվում է ընտանիքից, որի սահմաններն ընդլայնվում են հասարակության մեջ՝ նախադպրոցականից մինչև հանրակրթական և արտադպրոցական հաստատություններ: Այս շղթան չկտրելու համար անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուրս մեր տեղում, մեր լիազորությունների շրջանակում նպաստենք յուրաքանչյուր երեխայի իրավունքի իրացմանը:

Այս ճանապարհին պետք է միավորվեն բոլորի ջանքերը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր երեխաների մանկությունն առավել ներդաշնակ, ապահով, անվտանգ դարձնելու համար:

Այսօր հնչող բազմաթիվ ցանկություններից ու բարեմաղթանքներից գերական թերևս այն է, որ յուրաքանչյուր երեխա ապրի ու մեծանա ընտանիքում, դաստիարակվի ջերմ և փոխադարձ ըմբռնման մթնոլորտում, հնարավորություն ունենա իրացնելու իր իրավունքները, լինի սիրված ու գնահատված ընտանեկան միջավայրում:

Չմոռնանք, որ մեր երեխաները մեր ամենօրյա ուշադրության, սիրո և պաշտպանության կարիքն ունեն, որոնք իրողություն դարձնելու համար համայնքում իրականացնում են ամենօրյա աշխատանք, կյանքի են կոչվում մի շարք ծրագրեր:

Սևան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում, մշակութային, սպորտային, արտադպրոցական կազմակերպություններում արվում է հնարավորը, որպեսզի մեր փոքրիկները, երեխաները լինեն մշտական ուշադրության

կետրոնում, ստանան անհրաժետ գիտելիքներ, խնամք, հմտություններ և կարողություններ՝ ապահովելով նրանց լսված և պաշտպանված լինելու իրավունքը:

Սևան համայնքի փոքրիկ ու պատանի բնակիչներ

Դուք ջերմություն եք, լույս ու սեր ու միաժամանակ ունեք ջերմության, սիրո ուշադրության կարիք, խաղաղ ապահով ներդաշնակ մանկություն ունենալու իրավունք, որի պատասխանատուն մեծահասակներն են:

Մենք վայելում ենք մեծագույն բերկրանք ձեր մանկական անմիջականության, պատանեկան թրթիռի, ձեր հոգու գույների ու լույսերի, ձեր ներկայության շնորհիվ:

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ մեր երեխաներին՝ հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ:

Սիրելի երեխաներ

Ցանկանում եմ, որ միշտ շրջապատված լինեք ձեր ծնողների ու հարազատների սիրով, վայելեք առողջ, խաղաղ ու անհոգ մանկություն՝ ձեր ընտանիքներին պարգևելով անսպառ երջանկություն, ձեզանով իրենց կյանքն իմաստավորելու անսահման բերկրանք: